

արար օրինակ մ'ընծայեցին համայն տիեզերաց, և մարդկային իրաւունքն էր ճանչնալ սովորեցուցին մարդոց :

« Սոյն Սահմանագրութիւնը, զոր մեր շնորհափայլ Վեհապետն հաճեցաւ շնորհել մեզ, վսեմ գործ մ'է, որով Վեհ. Սուրբանը կայսրութեան մեծ բարեկարգել է և իւր ազգին վերանորոգիչ պիտի ըլլայ : Տեսական բարօրութեան նոր դարադրուի մը պիտի բանայ համօրէն Օսմանեան հպատակաց համար, որք մի և

նոյն Վեհապետին պաշտպանութեան ներքև կ'ապրին, և այսօր մեծ միութեամբ և լաւագոյն համաձայնութեամբ ազատութեան իսկական իրաւունքները կ'ընդունին :

« Ուրեմն մեր հայրենակցաց պարտքն է փոխադարձաբար խնդակցել, որ այսպիսի լուսաւորեալ Վեհապետի մ'ամենախիբեղի հպատակներն ըլլալու պատիւն ունին » :

ՇՈՒՎԱԼՈՎ ԿՈՄՍՆ ԵՒ ԻԳՆԱՏԻՎ ԶՕՐԱՎԱՐՆ

Կորչաբով իշխանն հիմա եօթանաս տունը ութ տարեկան է, և թէպէտ յայտնի չէ թէ ո՞վ պիտի յաջորդէ իրեն տեղը, սակայն քաղաքագէտք սկըսեր են մտածել անոր ժառանգութեանը վրայ : Արդեօք որո՞ւ պիտի վիճակի իշխանութեան և փառաց այն մեծաշուք և նախանձելի ժառանգութիւնն, զոր Կորչաբով իշխանն ասկէ քսան տարի առաջ ընդունեցաւ Նեսէլրոտ կոմսին ձեռքէն : Առ ժամս բան մը որոշ չի գիտցուիր. բայց թէ և մերձաւորագոյն ժառանգ մը չըլլայ ալ, սակայն այս ստոյգ է որ հետամուտ եղողներ կան : Ասոնց մէջ առաջին կարգի են Շուվալով կոմսն ու Իգնատիէվ զօրավարը. կան ուրիշներ ալ որ ասոնց հաւասար կամ աւելի հաւանականութիւն ունին այն բարձին հասնելու. բայց այս երկու քաղաքագէտք վերջի տարիներուս մէջ Ռուսիոյ աշխարհափարութեան նկատմամբ այնպէս լաւ շարժեցան և գործեցին, որ ամենուն մտադրութիւնն իրենց դրաւեցին :

* *

Շուվալով կոմսն դեռ ևս յիմնամեայ չկայ, և Ռուսիոյ մեծամեծ անուններէն

մէկուն ժառանգն է : Շուվալով կոմսին ազգատոհմը մասնաւոր կերպով անցեալ դարուն մէջ նշանաւոր եղած է : Անոնցմէ մէկն՝ Ալեքսանդր Շուվալով՝ եղիտարեթ կայսրուհւոյն ժամանակ գաղտնի դիւանատան զրուխ եղաւ. ուրիշ մ'ալ իման Շուվալով, նոյն կայսրուհւոյն մտերիմն եղաւ, և կատարիւնէ Բ կայսրուհւոյն ժամանակ՝ այցելութեան գնաց Վոյդէտի 'ի Ֆէռնէյ, և ճոխ պարգևներ ընծայ տարաւ կայսրուհւոյն կողմանէ. նաև Մոսկուայի Համալսարանին և Գեղեցիկ արձեւատից ճեմարանին հիմնադիրն ինքն եղաւ : Գարձեալ դիւանորոպէս ինքն եղած է Գաղղիոյ զրոպանութիւնը Ռուսիոյ մէջ սիրելի ընդոն, երբ գերմանական ազդեցութիւնը կր տկարանար : Ի վան՝ Շուվալովի երկրորդ ցեղէն կը սերբեր, մինչդեռ արդի կոմսն Պետրոս Շուվալով՝ անդրանիկ ցեղէն կը սերբի : Ասոր հայրն՝ արքունեաց մեծ հազարապետ էր, որով և Պետրոս կոմսն ալ իր պատանեկութիւնէն սկսեալ կայսերական ընտանեաց մէջ մեծցած էր : Այս ամսն առաւելութեանց հետ, ունի նաև վայելչութիւն դիմաց, ընտիր կենցաղաւարութիւն և յամենայնի կատարեալ ազնուականութիւն : Իր ամուս.

նութեան պսակն ալ քաղաքաւոր եղաւ Օրբով Դաւիթով կոմսին այրուցն հետ, և իւր առանձնական կենաց արժանապատուութիւնն ամենևին արգելք չեղաւ իր քաղաքական յառաջադիմութեանն: Երիտասարդական հասակին մէջ Լիվոնիոյ և Քուրլանտիոյ գաւառաց կուսակալ եղաւ. այս պաշտօնիս մէջ՝ յորում շատ հնարագիտութիւն կր պահանջուի, գերմանական ծագումն ունեցող ազնուականաց ընդդիմադրութեանցն և պահանջանացը պատճառաւ, Շուվալով կոմսը վարչութեան մեծ տաղանդ ցըցուց: Յամին 1866 կայսրն անուանեց զինքն ավակից գորակետ, և ասոր համար Պետրբուրկ եկեբ էր կայսեր շնորհակալ ըլլալու, երբ Քարաբողով ուսանողն Աղեքսանդրի Բ վրայ ատրճանակ պարպեց: Այս դէպքիս վրայ՝ Տոկորուքով իշխանն՝ հրաժարեցաւ առանձնական դիւանատան երարոյ քաժնիս զլիսաւորութենէն, անոր յաջորդեց Շուվալով կոմսն:

Առանձնական դիւանատան երարոյ քաժնիը գրեթէ նոյն է ընդհանուր ստիկանութեան հետ: Այս անպաճոյճ անուանակոյութեամբ դիւանատան երարոյ բաժին ըսուածն, հին դիւանատան գաղանի ստիկանութեան տեղը բռնեբ էր, զոր իվան Ահաւոր Զարը վեչ տասաներորդ դարուն մէջ հաստատեբ էր, և զոր մեծն Պետրոս յետոյ կարգաւորեց: Այս գաղտնի դիւանատունը Ռուսիոյ համար ճիշդ հաւատաքննութեան ատեան մ'էր: Պաշտօն ունէր փնտռելու և պատժելու քաղաքական ոճրագործութիւններն ու յանցաւորութիւնները. նաև զանոնք պատուհասեց, զորոնք իշխանութեան գիտութեամբ կ'ուզէին վերցունել մէջ տեղէն: Այս ատեանն էր որ մեծն Պետրոսի հաճութեամբ դատեց և 'ի մահ դատապարտեց զկայսրորդին, զտարաբազն Ալեքսիս: Այս ատեանն էր որ 'ի Միպեթիս արարեց զՄէնչիքով՝ ետարինէի Ա մահուանէն ետքը. զոհեց Տոկորուքովի տոհմը՝ Պիրենի ատելութեանն, Աննա իվանովնա կայսրուհոյն

ժամանակ. Օտէրման դիւանապետը, Մունիխ մարաշախոր և Լէոնիէփոտէ կոմսն 'ի մահ դատապարտեց և Միպեթիս փոխադրեց Եղիսարեթի ժամանակ: Այս ատեանը փոխանակաւ մերթ գերմանական կուսակցութեան, մերթ ուսական կուսակցութեան գործը մ'եղաւ, որոնք Մեծին Պետրոսի յաջորդացը ժամանակ՝ իշխանութիւնը մէկմէկու ձեռքէն կ'ուզէին առնուլ: Պետրոս Բ իր սակաւատե թագաւորութեան ժամանակ, բոլորովին խափանեց այս գաղտնի դիւանատունը. բայց իր թագուհին կատարինէ Բ նորէն հաստատեց զայն, միայն բաւական համարելով անոր անունը փոխել, որ շատ ատելի եղած էր. Պետրոս Գ իսպառ վերուց զայն: Աղեքսանդրի Ա ժամանակ, 1809-1819, ոստիկանութեան պաշտօնարան մը հաստատուեցաւ. և վերջապէս Նիկողայոս կայսրն, յամին 1826, այն երարոյ քաժնին հաստատեց, որ վարչութեան գլխաւոր հնարից մէկն եղաւ:

Իսկզբանէ 'ի վեր այն երարոյ քաժնին Ռուսիոյ տէրութեան մեծ իշխանութիւններէն մէկն եղած է. զուխը կը կոչուի զօրապետ ոստիկանութեան գլխնուրոց (Général des gendarmes). և այն անձը կայսրութեան ամենակարևոր պաշտօնեայն է, յետ դիւանապետին և առանձնական դիւանատան գլխաւորին. կայսրը կ'անուանէ զինքն և իրմէ կախումն ունի, և Ռուսիոյ վարչութեան մէջ աստիճանաւ անկէ վեր մէկը չկայ: Իր բարձր ոստիկանութեան իրաւասութիւնը բոլոր կայսրութեան վրայ կը տարածուի, մինչև նաև սահմանագլխէն ալ անդին: Ռուսիոյ աւմեն մեծ ու պզտիկ քաղաքաց մէջ ոստիկանութեան հաղարապետ մը կամ հարիւրապետ մը կը ներկայացունէ զինքը: Այս զօրականը պարտական է ամենուն վրայ հսկելու, թէ պաշտօնատեարց և թէ առանձնականաց վրայ պարտական է ամեն կարևոր գործոց հաշիւն առնելու և ամեն արտունջ և սողաք խմանալու. ակմբապայք և ժա

ղովարանք բաց են միշտ այն պաշտօնէին առջև, և իրմէ պահանջուած տեղեկութիւնները կը հաղորդէ իր գլխաւորին. որով ոստիկանաց զօրապետը իր գործակալաց հետ այս կերպ հաղորդակցութիւն ունենալով՝ ամեն բան կը գիտնայ, իւր գաղտնի քննութիւնն կը տարածուի բոլոր վարչութեան վրայ, մինչև երբեմն նախարարք անգամ հրամաններ կ'ընդունին երրորդ քաժնիկ գլխաւորէն յանուն կայսեր: Օտարութեան մէջ այն Ռուսները որ հրաման ունին. ճանապարհորդելու օտար երկիրներ, ազատ չեն այս գաղտնի ոստիկանութեան հսկողութենէն. և յանկարծ հրաման կու գայ անոնցմէ մէկուն որ հայրենիք վերադառնայ: Այս ոստիկանութեան գրութեամբն էր որ Նիկողայոս կայսրը կրցաւ երեսուն տարի իր իշխանութիւնը գործածել, որով և իր հեղինակութիւնը բոլոր ուժովը պահեց մինչև կենաց վերջին օրը, և այնպիսի ճշտութեամբ, որ երբէք չնուագեցաւ:

Ազգքսանդրի Բ ժամանակ այն երրորդ քաժնիկ զօրութիւնը շատ տկարացաւ. նախ կայսրը կարևոր չհամարեցաւ այն բարձր ոստիկանութեան առաջին կորովն արծարծել: Թերևս թագաժառանգ մեծ զուքս եղած ժամանակն անկէ կրած քանի մը տճաճութեանց պատճառաւ ատելի եղած ըլլայ իրեն այն պաշտօնարանն: Ուստի Տրչկորովը իշխանն, որ ոստիկանաց զօրապետ էր, բաւական կը համարէր այն պատուաւոր պաշտօնին առաւելութիւնքը վայելել, առանց ամենևին հսկելու գաղտնի ընկերութեանց և կուսակցութեանց վրայ, որ սկսեր էին յերևան գալ և որսալ համալսարանաց ուսանող պատանիները: Քարաքողովի եղբանագործութիւնն իբրև ազդարարութիւն մ'եղաւ. այն ատեն Շուվալով կոմսն հարկադրուեցաւ հասարակաց ապահովութեան ոստիկանութեանն առաջին ուժը և գործունէութիւնը տալ. սակայն Նիկողայոս կայսեր գրութեան սխալմունքէն գիտցաւ

ազատ մնալ. և այնչափ չսփաւորութիւն և միանգամայն անկասութիւն բանեցուց, որչափ որ իր պաշտօնը կը ներէր: Սակայն ամենևին չխռովեցաւ քանի մը անձանց հակառակելու. ինչպէս շատ առիթներու մէջ յայտնեց իր ընդդիմութիւնը Նիկողայ Միլուտիններ, քին գործոց նախարարին արմատական ըսուած քաղաքականութեանը դէմ: Այս պաշտօնեայն մեծ ազդեցութիւն ունէր թէ նախարարաց վրայ, որոնցմէ մէկն ալ իր Դիմիտրի եղբայրն էր պատերազմի պաշտօնեայ, և Դոլստոյի կոմսին վրայ՝ որ հասարակաց ուսման պաշտօնեայ էր և տաղանդով իրեն նեցուկ էր, և թէ իբրև զլուխ հին Ռուսաց կուսակցութեան, որ այնչափ յարգ աւեր էր յետ լեհաստանի ապստամբութեանն յամին 1863, և յետ Մուկոլաչի շրագրին մղեռանդն ջանիցը: Շուվալով կոմսը չընկճեցաւ ամենևին այն չափազանց բաղձումներէն, զոր մտասակար կը համարէր: Ազնուականները զինքը այնպէս ներողամիտ չգտան իրենց բարոյամեղական ըզճիցը: Ս. Յնպէս որ իրեն դրոյմամբը և ՚ի մեծ զարմանս իր բարեկամաց շատերուն Պետրբուրկի ազնուականաց ժողովարանը լուծուեցաւ յամին 1867: Պետրբուրկի քաղաքապետ լէվալով կոմսն՝ կոչիկ յոտս և կարթաւոր մըտաւ այն ժողովարանը լուծման վճիռը կարդալու համար, և նոյն իսկ այն ժողովարանին նախագահը՝ Օրլով Դաւիթով կոմսն, թէպէտ և արենակից էր երրորդ քաժնի գլխաւորին, սակայն հրաւէրք ընդունեցաւ ճամբորդութիւն ընելու Ռուսիայէն դուրս: Շուվալով կոմսն ոչինչ նուազ արութեամբ գիտցաւ իր պարտքը նաև առ կայսերական ընտանիքը. և չի դանդաղեցաւ կանխախմացնելու կայսեր թէթագաժառանգն թղթակցութիւն կ'ընէ համալսարանական կուսակցութեան զլխաւորացն հետ. և ինչուան հակառակ կեցաւ կայսրուհւոյն հոգևոր վերակեցուիւն, վտանգալէջ քրիստոնեայ համարուելու: Միով բանիւ Շուվալով կոմսն յառաջ քան

դամենայն իր պաշտօնին մարդն եղաւ, և միանգամայն չմոռցաւ իր ազնուականութիւնը, և ասով կրցաւ պահել, 'ի վարձ իր աշխատութեանց՝ կայսեր լիակատար վատահութիւնը:

Անշուշտ թէ որ ուզենար կրնար ուրիշ պաշտօնի ալ հասնիլ. նոյն իսկ երբոր նիկողա Միլուտին ներքին գործոց նախարարը, կաթուածէ զարնուեցաւ 1866 տարւոյն վերջը, Շուվալով կոմսն յանձնառու եղաւ առ ժամանակ մը ներքին գործոց նախարարին պաշտօնը վարելու լեհաստանի խնդրոց նկատմամբ: Բայց Ռուսիոյ մէջ չկայ պաշտօն մը որ հաւասարի երրորդ քաժնի զլիաւորութեանը, որով այն զլիաւորն ուղղակի և ամեն օր վերաբերութիւն կ'ունենայ վեհապետին հետ, որ Ռուսիոյ մէջ, աւելի քան Եւրոպայի ուրիշ ամեն տէրութեանց մէջ, մի միայն աղբիւր է ամենայն իշխանութեան և շորհմանց: Շուվալով կոմսն եօթը տարի կեցաւ այն պաշտաման մէջ, թէ և ենթարկուած էր ճիշդ հպատակութեան՝ զոր իր դիրքը կը պահանջէր, աշխատութեան՝ զոր այլ և այլ կուսակցութեանց և անոնց բազմամեներուն վրայ հսկողութիւնը կը պատճառէր, և վերջապէս անհանդատութեան՝ զոր խռովութից հանգամանաց վիճակը կը յարուցանէր, յորում և ինքնին կայսրն իսկ երկու տարուան մէջ երկու անգամ դաւաճանութեան ենթակայ եղաւ: Ամենայնարմար էր պաշտօնը գոնէ այնպիսի անձի համար, որ կ'ուզէր բարձրանալ և միանգամայն դիտէր սպասել: Եթէ ուրիշ կողմանէ կային իրեն հակառակորդներ և չարախօսներ, սակայն զի տէին թէ ինչպէս ակնածելու են և խոհեմութեամբ վարուելու են իրեն հետ: Կայսեր մտերիմ և բարձր ուստիկանութեան գլուխ ըլլալով Շուվալով կոմսն ամենայն կերպով կրնար որսւ որ ալ գէժ ըլլայ՝ ինքը զինքը պաշտպանել: Մակայն օր մը, յամին 1868, կարծեց թէ վտանգի մէջ է. վասն զի իր բարեկամը վաւուրէիվ ներքին գործոց նախարարութեանէն վար առնուեցաւ, ինչպէս կը կարծուէր, թագաժառանգին ձեռնտուութեամբն: Այս անկումը թերևս երրորդ քաժնի վերակեցութիւն համար ազգարարութիւն մ'էր: Շուվալով կոմսն առանց տարակուսելու ընելիքին վրայ, ուղղակի կայսեր գնաց իրեն հրատարականը տալու, եթէ կայսրը վրան ալ վստահութիւն չունէր: Ազգաբանորդ Բ բոլորովին ապահովեց իր մտերիմը: Այս գէպքէն վերջը տեսնուեցաւ որ Շուվալով կոմսին ազգացութիւնն աւելի զգալի եղաւ ընդհանուր քաղաքական ամեն խնդրոց մէջ. և շատ անգամ իրեն կարծիքը զօրեց խորհրդարանին մէջ թէ ներքին և թէ արտաքին այլ և այլ խնդրոց նկատմամբ: Ուստի կարելի էր նախագուշակել թէ ուրիշ բարձր պաշտօն մը քան զզլիաւորութիւնն երրորդ քաժնի վերապահեալ էր իրեն: այս կարծիքը առաւելապէս այն ատեն հաստատութիւն առաւ, երբ Շուվալով կոմսն յանկարծ ուստիկանութենէ 'ի քաղաքագիտութիւն անցաւ: Մտերմական նուիրակութիւնն առ խորհրդարանն լոնտրայի, զոր 1873 տարւոյն սկիզբը կատարեց, և իւր անուանիլը դեսպան յԱնգղիա՝ ենթադրել տուին թէ կայսրը կ'ուզէր վարժեցունել զինքը քաղաքագիտական արուեստին, որպէս զի պատրաստ գտնուի ժամանակին կորչաքով իշխանին յաջորդելու:

Յարմար առիթն էր Շուվալով կոմսը մէկէն ասպարէզ հանելու: 1872 տարւոյն վերջերը, Անգղիոյ կասկածները Ռուսիոյ դէմ նորէն արթնցան՝ կեդրոնական Ասիոյ խնդրոց պատճառաւ: Ռուսիա որոշեր էր քայլ մ'առաւ երթալու և խիվայի խանութեան տիրելու: Անգղիա սկզբան այս դիտաւորութեանցը միտք չգրաւ, և ոչ իսկ Դալայը լրագիրը շատ հոգ կ'ընէր, և « Ռուսիոյ առաջադիմութիւնքը, կ'ընէր, 'ի կեդրոնական Ասիա, այնպէս օրինաւոր են, ինչպէս մեր տիրապետութիւնն 'ի Հնդկաստան: Եթէ Ռուսիա տիրապետելու ըլլայ բոլոր այն

երկրին որ կ'ընկնայ դէպ 'ի հիւսիս
 Պարսկաստանի և յարևմուտս Հնդկա-
 ֆուշի լերանց մեծամեծ գօտեացն, ան-
 կէ անդին ալ փորձութիւն չի մնար :
 Բայց երբոր գիտութեցաւ թէ իրվայի
 արչաւանքն որոշուեր է, վախցաւ Անգ-
 ղիացիք այն վտանգներէն՝ որ կը սպառ-
 նային Հնդկաստանի վրայ, եթէ Ռու-
 սիա սահմանակից ըլլար Աֆղանստա-
 նի : Այն տտեն Սիր կլտըսդոն և լորտ
 կրանվիլ մտածեցին, երկրին անհան-
 զատութիւնը հանգարտելու համար, ա-
 ուջարկել Ռուսիոյ որ սահման մ'որոշէ
 անկէ անդին չանցնելու համար : Եղն
 ժամանակը Դայնզ լրագիրն ալ լեզուն
 փոխեց ու ձայնը բարձրացուց, թէ Անգ-
 ղիա պէտք է Աֆղանստանի անկախու-
 թիւնը պահէ և իր պաշտպանութեան
 ներքնն առնու յայն գաւառները, որոնց
 էմիրը կը տիրէր մօտ այն գաւառնե-
 րուն ուր Ռուսք կը յառաջէին :

« Եթէ Ռուսիա ընդունի մեր առաջ-
 արկած սահմանները, կ'ըսէր Դայնզ,
 կեդրոնական Ասիոյ խնդիրը իսկ մը ժա-
 մանակ կը վերջանայ. իսկ եթէ մերժէ,
 հարկ պիտի ըլլայ շուտ կամ ուշ սրով
 լուծել այն խնդիրը » : Ռուսիա չէր ու-
 ղեր նեղը ձգել և զրգռել զԱնգղիա . և
 այնպէս խաղաղասէր երևցաւ իբրև թէ
 Սիր կլտըսդոնէն և լորտ կրանվիլէն
 նուաժ երկչոտ նախարարներէ կաղ-
 մուած ըլլար խորհրդարանը : « Մենք
 չենք մերժեր ընդունելու, պատասխա-
 նեց կորչաքով իշխանն, Անգղիոյ ուզած
 սահմանագիծը » :

Ռուսիա շատ աւելի յօժարակամ ե-
 րևցաւ այս բանիս, վասն զի երկար ժա-
 մանակ պէտք էր այն սահմանագիծն
 հասնելու : Բայց քաղաքագիտական ծա-
 նուցադրիբը բաւական չհամարեցաւ .
 մասնադր Նուիրակութեամբ զրկուե-
 ցաւ Շուվալով կոմսը, որպէս զի Լոն-
 արայի խորհրդարանին ծանուցանէ Ա-
 ղեքսանդր կայսեր խաղաղասիրական
 գիտաւորութիւնները : Այս վարմունքը
 լաւարգասիք ունեցաւ յԱնգղիա : Ռու-
 սիա ամենևին այսպիսի մեծարանք չէր
 ցըցուցած Անգղիոյ, որով կ'ուզէր Պետր-

բուրկի խորհրդարանը մտերմական ի-
 րաւախոհութեան մտնել Անգղիոյ կա-
 ուվարութեանն հետ, և Շուվալով կոմ-
 սին բռնած լեզուն մտածել տուաւ թէ
 ինքը միայն կրնայ այս քաղաքականու-
 թեան մարդն ըլլալ :

Շատ աւելի զարմացան Անգղիացիք
 երբ իմացան թէ Շուվալով կոմսին դեռ
 պանութիւնը նաև կայսեր՝ դատեր ա-
 մուսնութեանն համար ալ էր : Պետր-
 քոռչկի օրսագրիկ այս բանիս վրայ տուած
 լուրն առանց մտադրութեան անցաւ,
 սակայն ամենաճշմարիտ էր : Շուվալով
 կոմսն զգուշութեամբ հարցուեցաւ թէ
 ինչ պայմանաւ ընդունելի կ'ըլլայ ա-
 մուսնութեան առաջարկութիւնն ընդ
 մեծ դքսուհին Մարիամ և իշխանն Ալ-
 պերտ, երկրորդ որդի Վիկտորիա թա-
 գուհույն : Անշուշտ ծանր էր կայսեր
 չկարենալ իր մէկ հատիկ դատերը թա-
 գաւորական պսակ մը ապահովել, մինչ-
 դեռ Տանիմարքայի փորձիկ թագաւորն՝
 իր երկու դատերն ամուսնացուցեր էր
 մէկն Անգղիոյ և միւսը Ռուսիոյ թագա-
 ժառանգաց հետ, և թէ իր երբօր կու-
 տանդեայ մեծ դքսին դուստրն թագու-
 հի էր Յունաստանի : Մի միայն թագա-
 ժառանգ. մը կար ազատ, Օրանժի իշ-
 խանն, բայց այն ալ հաճոյ չէր անցած :
 Վերջապէս քանի մը անձնական պատ-
 շաճութիւնք նախամեծար ընել տուին
 Ալպերտ իշխանը, կայսեր առանձին սէրն
 իւր մէկ հատիկ դատերը վրայ, և իւր
 քաղաքական շահը պատշաճ տեսնել կու-
 տային այն տտեն այս ամուսնութեան ա-
 ուջարկը : Անգղիացի իշխանը, որ կը
 կրէ դուքս Իտիմպուրկի տիտղոսը, է
 նաև թագաժառանգ իշխան Սաքս-ֆու-
 պուրկ-կոթայի մեծ դքսութեանը. ուս-
 տի Մարիամ մեծ դքսուհին, փոխանակ
 թագաւորական պսակի, գէթ պիտի ու-
 նենալ Գերմանիոյ մէջ մեծ դքսական
 պսակ մը : Անգղիոյ և Ռուսիոյ արքու-
 նական երկու ընտանեաց այս խնամու-
 թիւնը, երկայն ժամանակ պիտի հեռա-
 ցընէ քաղաքական տարաձայնութեան
 ենթագորութիւններն երկու հզօր ակաւ-
 թեանց մէջէն : Ռուսիոյ Շուվալով կոմսին

դեպքանութիւնը մեծ կարեւորութիւն մ'ունէր, և ամենայն կերպով յաջողեցաւ: Արդ եթէ յիշեմք որ կորչաբով իշխանն իր բարձր աստիճանին հասաւ կնքելով ամուսնութիւնն Օլլա մեծ դքսուհւոյն, դստեր Նիկողայոս կոյսեր, Վիւրդէմպէրկի թագածառանդ իշխանին հետ, այսպէս ալ իրաւամբք կրնայ յուսացուիլ որ այս ամուսնութեան ալ յաջողութիւնը բարձր վիճակ մը պիտի պատրաստէ ապագային մէջ Շուվալով կոմսին համար, որ ամսէ մը ետ դարձաւ հաշիւ տալու կայսեր իրեն դեպքանութեանը, և այնպէս լաւ կերպով սկսեր էր իր քաղաքագիտական ընթացքն, որ մէկէն լոնտրայի դեպքան անուանուեցաւ, ուր կը շարունակէ իր պաշտօնը մինչև հիմա մեծ գոհութեամբ իր վեհապետին: Մարիամ մեծ դքսուհւոյն ամուսնութիւնն ընդ դքսին էտիմպուրկի կատարուեցաւ 'ի Պետրբուրկ 'ի սկիզբն 1874 տարւոյն: Եւ այսու Շուվալով կոմսն միշտ այն սակաւագիւտ տաղանդաւոր անձանց մէկը կ'ըլլայ որ կրնայ կորչաբով իշխանին արժանապէս յաջորդել:

* * *

Իգնատիէվ զօրավարն իշխանանդն չէ, ինչպէս Շուվալով կոմսն, այլ այն երկրորդական աղնուականներէն է, որոնք Ռուսիոյ մէջ, ինչպէս կ'ըստի, անթիւ են իբրև զաւազ առ ամեն ծովու: Հայրն իրեն ճարտար քաջաց, վասն զի հասաւ ըլլալու սպարապետ հետևակազօրուն, անկէից զօրապետ, և Պետրբուրկի քաղաքապետ: Քսան և հնգամեայ հասակին մէջ, յամին 1854, Նիկոլայ իգնատիէվ Սպայակուտի հարիւրապետ էր: Խորիմու պատուոյ խաչն ընդունեցաւ 'ի վարձ Զինւանտիոյ սպանց վրայ Գաշնակցաց նաւատորմին ղէմ ղինուորերուն համար. ետքը Սիպերիոյ կուսակալ Մուրավիէվ զօրապետին սպայակուտէն ելաւ: Արտաքոյ կարգի դեպքան զրկուելով Չինաստան. գիտցաւ օգտուել անդրիս-գաղղիական արշաւանքէն, և բեքիին սրբունեացմէ Ռուսիոյ մասն ընդու-

նեցաւ շատ մը գաւառներ Մանչուրիոյ մէջ, Եւ ահա այս գործովս ինքզինքը ճանչցուց: Եքեղ ամուսնութիւն մը հանց զինքը բարձր ազնուականութեան կարգը: — Նաև չէր անհոգանար նորա, նոր ազնուութիւններ ստանալ, ուստի քիչ ժամանակէն ինքն ալ այն մարդկանց կարգէն սեպուեցաւ, որոնց վրայ Մուսկուայի յրազիրն գովեստով կը խօսեր և իբր ապագային մեծ մարդիկ կը ցուցնէր: Յամին 1864 լապանով իշխանն հրաժարելով կոստանդնուպոլսի դեպքանութենէն, իգնատիէվ զօրավարն իրեն յաջորդեց, 'ի սկզբան լիազօր պաշտօնեայ անուամբ և յետոյ իր արդեամբքը դեպքանութեան պատուոյն հասաւ:

Կ'ըսեն թէ կորչաբով իշխանն չէր աստիճանը զինքը և ոչ շատ համարմունք ունէր անոր տաղանդին վրայ: Օր մը երբ իգնատիէվ տհաճութիւն կը ցուցնէր քանի մը հրամանաց՝ երրորդի մը առջև, Գիւանապետն սաստեց զինքն ըսելով. «Գեռ և ս երիտասարդ էք և մեր քաղաքագիտութեան մեծամեծ պաշտօններէն մէկուն վրայ զրուեր էք, ազատ էք թողլու զայն. և ահա այս պատճառնս յօժարակամ ձեր տեղը կը յաջորդէ »: Իգնատիէվ զօրավարը հասկըցաւ թէ ինչ կ'ուզէր ըսել. և եթէ այս գէպքէն վերջը կորչաբով իշխանին բարեկամներէն չեղաւ, սակայն Գիւանապետն արևելեան ծանրակշիռ խնդրոյն մէջ միայն անոր աշարջութեանն ու խոհեմութեանը վստացաւ:

Ռուսիոյ ներկայացուցիչն 'ի կոստանդնուպոլսի, սկսեալ 1864 թուականէն, այն ծանրակշիռութիւնը չունէր, ինչ որ ետքն ունեցաւ, սկսեալ 1870 թուականէն մինչև Ապտիւլ-Աղիլի մահը: Այսու ամենայնիւ իգնատիէվ զօրավարն ամենակարևոր անձանց մէկն կը համարուէր և իրաւամբք, որով ինքն իր վրոյ մեծ վստահութիւն առեր էր: Սակայն շատ չ'յաջողեցաւ թէ իր պաշտօնակցաց առջև, ինչպէս են Անգղիոյ և Գաղղիոյ դեպքանքը, և թէ Ծուստո և Ալի վաչաքի նման երևելի նախարարաց առջև:

Անգամ մը Ռուսիոյ դեսպանը տարն-
ջանօք խմացուց Ալի փաշային թէ ամե-
նէին իրեն խորհրդոց չեն հետևիր .
փաշան ալ պատասխան տուաւ թէ
« Լաւ խորհուրդներ տուր մեզի և մենք
յօժարակամ կ'ընդունինք զանոնք » :
1866 տարւոյն հանգամանքն եղան
պատճառ որ իգնատիէվ զօրավարը
պարագ տեղ աշխատելէն դադրեցաւ :
Քարիզու խորհրդարանին բաղձանքը
բարեկամութիւն հաստատելու Պետր-
բուրկի պաշտօնարանին հետ մերձե-
ցուցին իրարու կոստանդնուպօլսի Ռու-
սիոյ և Գաղղիոյ դեսպանները : « Վե-
հափառ կայսրն , կը գրէր կորչաբով
իշխանն առ դեսպանն Ռուսիոյ 'ի Բա-
րիզ , սկսեալ 16 նոյեմբերի 1866 տա-
րւոյն , համութեամբ կ'ընդունի այն ա-
ռաշարկութիւնքը զորՄուզիէ մարգէզն
ըրած է ձեզի , Գաղղիոյ խորհրդարա-
նին և մեր մէջ բարեկամութիւն մը
հաստատելու վախճանաւ , նկատմամբ
արևելքի պատահարաց » : Այս պատա-
նալքն էին կրէտէ կղզւոյն ապստամ-
բութիւնը , Սերուիոյ բողոքը , յետս պա-
հանջելու Պեղկրատի միջնաբերդը և Սե-
րուիոյ երկրին մէջ թուրքաց ձեռքնե-
ղած բողոք բերդերը , և վերջապէս Պու-
լարաց յուզմունքն : Այն անգամ իգնա-
տիէվ զօրավարն թուրքիոյ մէջ մեծ
դեր պիտի խաղար . սակայն շատ յա-
ջող դեր մը չեղաւ . վասն զի չկրցաւ
ինքն ընդունիլ Բ . Դոնէն Սերուիոյ բեր-
դերը . այլ Գաղղիոյ դեսպանն Պուրէ
համագեց Բ . Դոնուս այս դժուարին զոհն
ընելու , զոր և մեծ պատուով կատա-
րեց : Պուլարիոյ խռովութիւնն ողոր-
մելի և յանդուգն ձեռնարկութիւն մը
եղաւ , իսկ կրէտէի ապստամբութեան
պէմ հակառակ Գաղղիոյ , Ռուսիոյ ,
Քրուսիոյ և Իտալիոյ հաւաքական ծա-
նուցադիրներուն՝ թուրքիա յաղթող ե-
լաւ : Ֆուատ փաշային արութիւնն ,
որ պարզ և որոշ կերպով խմացուց թէ
ուրիշ Նաւարին մը պէտք է՝ որպէս զի
թուրքիա թողու կրէտէն Յունաց ձեռ-
քը , և Ալի փաշային ճարտարամտու-
թիւնն , որ անձամբ ապստամբութեան

տեղը զնայ և հասկըցաւ թէ ինչ հնարք
պէտք են այն ապստամբութեան յաղ-
թելու , ապահովեցին խաղաղութեան
վերատին հաստատութիւնը : Իգնա-
տիէվ զօրավարն չկրցաւ առնուլ կրէ-
տէն իբր օժիտ մեծ դքսուհւոյն Օլկայի ,
որ յամին 1867 , Յունաց Գէորգ թա-
գաւորին հետ ամուսնացաւ : Իսկ Յոյնք
'ի վրէժ իրենց յուսախարութեանը՝
կապոյտ մատուցան մը (Livre Bleu)
հրատարակեցին , որուն վրայ շատ ծի-
ծաղեցան կոստանդնուպօլսի քաղաքա-
կան ակումբներու մէջ : Այն մատեանն
կը բովանդակէր շատ մը նամակներ
Յունաստանի դեսպանին 'ի կոստան-
դնուպօլսի , որոնց մէջ դեսպանն կը
պատմէր իգնատիէվի հետ ըրած խօ-
սակցութիւնքը , որոնք կը ցուցնէին
թէ ո՞րպէս խաբուեալ էին Յոյններն ,
կարծելով թէ իգնատիէվ մեծ ազդե-
ցութիւն ունի առ Բ . Դոնուս և Գաղղիոյ
և Սնդղիոյ դեսպանաց առջև :

Այն խնդրոյ մէջ , ուր կը պահանջուէր
իգնատիէվ զօրավարէն մեծ հնարագի-
տութիւն և ճարտարմտութիւն , ան-
շուշտ ամենէն փափուկն Պուլարաց և
Յունաց երկար վէճն էր : Առաջինք կ'ու-
զէին բաժնուիլ տիեզերական (յունա-
կան) պատրիարքութէն , և իբրև Սլաւք
Ռուսիոյ ձեռնտուութիւնը կը խնդ-
րէին : Իսկ երկրորդները կը վստահէին
այն դարական պաշտպանութեան վրայ
որ Ռուսիա ցրցուցեր էր իրենց : Մեծ
յաջողակութիւն պէտք էր երկու կող-
մանց պահանջմունքն ալ միաբանելու և
փոփոխակի զիջողութեամբ իրաւախո-
հութիւն ընելու : Այս գործն ամենա-
դժուարին էր . սակայն Ռուսիա այնպի-
սի մեծ շահ ունէր այն միութիւնը պա-
հելու , որ պէտք էր իր դեսպանն ալ
ըստ այնմ գործէր : Գոնէ կրնար Բ .
Դրան թողուիլ , որ սկսեր էր Պուլարաց
տրանջանացն ուշ զնել , այս խնդրոյն
որոշման պատասխանատուութիւնը :

Իգնատիէվ զօրավարը մեծ խորագի-
տութեամբ շարժեցաւ . 1870 թուական
նէն ետքը ամենայն ջանք ըրաւ որ Բ .
Դոնէն ընդունի Պուլարիոյ էկզարքու-

քեան կանգնումն, այսինքն բաժանումն Պուլղարիոյ եկեղեցւոյն՝ Յունաց որթուտըս եկեղեցիէն, Պուլղարիոյ եկեղեցւոյն անկախութիւնն հրատարակուեցաւ յամին 1872, որուն վրայ Յոյները շատ նեղացան, կոստանդնուպօլսի պատրիարքը բողոքած ըլլալով, իգնատիէվ զօրավարը ջանաց և Մոսկուայի սինոդէն պախարակել տուաւ զինքը. նաև փորձ փորձեց Յունաց եկեղեցւոյն մէջ ալ երկպառակութիւն ձգելու, գրքդռելով Երուսաղեմի պատրիարքը, որ բողոքէ ընդդէմ նըզովիցն զոր կոստանդնուպօլսի պատրիարքը հրատարակիր էր Պուլղար եպիսկոպոսաց զէմ: Իգնատիէվ զօրավարին այս քաղաքական խորագիտութեամբն Յունաց և Պուլղարաց մէջ եղած ցեղական ատելութիւնները գարձեալ գրգռուեցան: Եւ թէ աշխատէր այն երկու ժողովուրդներն անհաշտ թշնամի ընելու իրարու դէմ, ասկէ աւելի չէր կրնար յաջողիլ: Ռուսիոյ զեսպանն իրեն քաղաքագիտութեանն փառաւոր յալթանակ մը կը համարէր Պուլղարիոյ Էկզարքունքեան կանգնումը, վտանգաւ իսկ Յունաց ատելի ըլլալու: Չգիտցուի թէ Ռուսիոյ կառավարութիւնն ինչ կը մըտածէր այսու նկատմամբ. այս սողոյգ է թէ արդի արևելեան խնդրոյն մէջ տեսնուեցաւ որ Յունաց ատելութիւնը մտած չէր. և անկարելի էր մնալովին այս վերջին դիպաց մէջ, ցըցուցին թէ ինչ աստիճանի ոյս ունին Սլաւեան ազգաց դէմ: Եւ ոչ մէկ յոյն մը տեղէն շարժեցաւ, մինչդեռ Պաթրանի Սլաւք զէնք առեր էին, մանաւանդ հակառակ զինուեցան թէ բանիւ, թէ գրով և թէ արդեամբ: Թեսալիա և Մակեդոնիա խաղաղ մնացին, իսկ կրէտէի յուզմունքը ծանր հետևանք մը չունեցաւ մինչև հիմայ:

Եւս 1870 տարւոյն դիպաց, Ռուսիա մեծ ազդեցութիւն ստացաւ կոստանդնուպօլսի մէջ: Գաղղիա ալ նշանակութիւն չունէր. Անգղիա քիչ նշանակութիւն ունէր. միայն Գերմանիա կար որ կրնար զէմ ելլել իրեն համար այս

նոր ասպարիզին մէջ ՚ի վոսփոր, հակառակ կենալով Ռուսիոյ տենչանացը: Զուատ և Ալի փաշա, որոնցմէ միայն կ'ականածէր Սուլթանը, մեռած էին. Իրենց յաջորդքն՝ այն գաղափարով պաշարուած էին թէ ալ ճար չկայ ազատելու Տաճկաստանն ՚ի կործանմանէ. վերջապէս Մուլղանն ալ, կէս մը խելագար, անյարմար էր կառավարելու կամ կառավարուելու: Ռուստի իգնատիէվ զօրավարին համար ժամանակն հասեր էր գործելու. և աշխարհ ամենայն զիտէ թէ պարտապ չկեցաւ, քայց իր քաղաքականութիւնն աւելի խստաբարոյ էր քան թէ հանճարեղ. վասն զի տեսութեան կէտ զրբեր էր թէ պէտք է օսմանեան պետութիւնը խանգարել, յազատութիւն հանելով գաւառները հետզհետէ, և վերջապէս այնպէս նեղը ձգել Սուլթանն որ Ռուսիոյ օգնութիւնը խնդրէ: Մահմուտ փաշային բարեկամութիւնը բաւական երաշխաւորութիւն մ'էր իր այս խորհուրդը յաջողցնելու: Չէր կարծուեր ամենեին թէ Թուրքիա զեռ կենդանութիւն ունենայ, այսինքն հայրենասիրութիւն տեսնանձայուզութիւն, որոնք վայ թէ գրգռուէին. և ոչ իսկ կ'իմացուէր թէ ազատութեան գաղտնի դաւանցութիւն մը կը պատարաստուէր Մուլղանին դէմ, և հարկ եղաւ որ յեղափոխութիւնը ծագի: Սոփտաներուն ոտք ելլելը, Ալատիւ-Ալիզին գահընկէցութիւնը և մահը, Պուլղարիոյ կոտորածը, մինչև նոյն ժամանակ բռնուած քաղաքականութեան հետևանք են: Քիչ մնաց որ կոստանդնուպօլսի ալ արիւնհեղութեան տեսարան մը պիտի բացուէր, աւելի ահաւոր քան թէ Սելանիկին: Իգնատիէվ ստիպուեցաւ արձակուրդ խնդրել, և շարժէ շարժի կ'ուշացնէր վերադարձը. Թուրք ալ կ'ուզէին որ բոլորովին նշտանայ. վասն զի դարձն ՚ի կոստանդնուպօլսի շարժաց պատճառ կը գուշակուէր: Ի Հիվատիա իգնատիէվ զօրավարը մասնակից եղաւ այն խորհուրդոց, ուր խաղաղութեան և պատեհազմի խնդիրը կը յուզուէր: Հիմա

ալ առ եւրոպական տէրութիւնս նուի
րակութեամբն անշուշտ այս խնդրոյն
խաղաղական լուծումն առ կ'ուզուի
Ռուսիոյ վեհափառ կայսեր կողմանէ
յետ ապահովելու արևելեան քրիստո-
նէից վիճակը : Եթէ իգնատիէվ զօր-
վարին խօսքը հեղինակութիւն ունի
այսպիսի դժուարակնճիւն ժամանակ
մը աշխարհիս հանգստութեանը հա-
մար, յայտնի է թէ կրնայ խաղաղու-
թիւն բերող ըլլալ :

* * *

Շուվարով կոմսն ու իգնատիէվ զօ-
րավարն Ռուսիոյ քաղաքականութեան
երկու երեսները կը ներկայացընեն : Մէ-
կը իր ծագմամբը և լոնտրայի դեսպա-
նութեան հանգամանօքը , Բարիզի ու
Պեռլինի հետ մտերմական վերաբերու-
թեցմբքը, կարծես թէ այն քաղաքակա-
նութեան խաղաղական երեսը կը ցու-
ցընէ : Խաղաղութիւն Եւրոպայի ցա-
մարին վրայ , և լուծումն արդի արևե-
լեան դժուարակնճիւն խնդրոյն՝ բոլոր
տէրութեանց միջամտութեամբը . այս-
պիսի է ահա այն քաղաքականութեան
նպատակը : Թերևս Շուվարով կոմսն ա-
մենևին բան մը թելադրած չըլլայ այս
իմաստով . բայց Աղեքսանդր կայսրն ու
գլուով չափ կ'աշխատի խաղաղութիւն
պահելու , և ահա այսու դիտմամբ ի-
րեն մտերիմ Շուվարով կոմսն , որուն

վրայ ամեն վստահութիւն ունէր , դրկեց
'ի լոնտրա : Իսկ իգնատիէվ զօրավարը
կը ներկայացընէ հին-ուուս կուսակցու-
թեան քաղաքական ու կրօնական տն-
չանքն , որ ոչ ինչ նուազ նախանձայոյդ
է քան զհին-թուրք կուսակցութիւնն :
Կը տեսնայ որ սուրբն Ռուսիա իր առա-
քելութենէն ետ չդառնայ , կանգնէ խա-
չը փոխանակ կէս լուսնի , բոլոր Սլաւ
ճանչնան իրենց հօրը : Չարին քաղաքա-
կան և կրօնական գերագահութիւնը ,
և որթոտրքս հաւասարը ճառագայթէ
միանգամայն թէ կոստանդնուպօլսէն և
թէ Մոսկուայէն : Ահա այս է այն կուսա-
կցութեան ուզածը , և իգնատիէվ զօ-
րավարն մեծ ծառայութիւն բրած հա-
մարուեցաւ այս բանիս համար : Այս
երկու քաղաքականութեան որը պիտի
յաղթանակէ . արդեօք վեհափառ կայ-
սեր քաղաքականութիւնն , որ խաղա-
ղութեան պայտան հանդիսացաւ , թէ
հին-ուուս կուսակցութեան քաղաքա-
կանութիւնն , որ հանդերձ ամենայն
վտանգաւ՝ պատերազմ կ'ուզէ : Այսպի-
սի է այն ահաւոր խնդիրն , որուն վրայ
կը մտածուի հիմա 'ի Պետրբուրկ : Այս
խնդրոյն լուծմանէն կը կախուի աշխար-
հիս խաղաղութիւնն . . . և թերևս այս
երկու մարդկանց բաղդն ալ , որ են Շու-
վարով կոմսն ու իգնատիէվ զօրավարը :

ՄԻԱՅԵԱԼ-ՆԱՀԱՆԳԱՑ ՆՈՐԱՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՀՆ

Այս տարի , 2 մարտի , ընտրուեցաւ
Ամերիկայի Միացեալ-Նահանգաց Նա-
խագահն , և 4 մարտի մտաւ պաշտօ-
նին : անունն է Հէյզ (Hayes) : Ինն ա-
միս Միացեալ-Նահանգները շարունակ
յուզման մէջ էին այս ընտրութեանն
համար , որ ամեն չորս տարին անգամ
կը նորոգուի , և այնպիսի այեկոծու-
թիւն կը յարուցանէ , որ բաւական է

կործանել որ և իցէ երկիր , եթէ Միա-
ցեալ-Նահանգաց նման բոլորովին ար-
տաքոյ կարդի տնտեսական , քաղաքա-
կան և աշխարհագրական պայմաններ
չունենայ : Խարդախանք , նեղութիւնք ,
և բռնաբարութիւնք առ զուրս կային .
արիւնհեղութիւնք հարաւային Նահան-
գաց մէջ : Եւ այս ամենն , որպէս զի
հասնին անուանելու նախադահ պատ-